Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոն՝** Վահե Ղազարյան - ՀՀ ներքին գործերի նախարար
2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս), 2023թ. հունիսի 11-14
3. **Հրավիրող կողմ՝** Լիտվայի Հանրապետության ներքին գործերի նախարարություն
4. **Գործուղման նպատակը՝** ՀՀ ՆԳՆ ոստիկանության և Լիտվայի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության վարչության միջև երկկողմ համագործակցության գործողությունների ծրագրի ստորագրում
5. **Քննարկված թեմաները՝** ՀՀ ներքին գործերի նախարարության և Լիտրվայի ներքին գործերի նախարարության միջև համագործակցությանն առնչվող հարցեր
6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Հունիսի 12-ին ՀՀ ներքին գործերի նախարարի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Լիտվայի Հանրապետության ՆԳ նախարարի հետ, որի ընթացքում քննարկվել են երկու երկրների ՆԳ նախարարությունների համագործակցության հնարավոր ուղղությունները, անդրադարձ է կատարվել Լիտվայի ներքին գործերի համակարգի կառուցվածքին և բարեփոխումներին:

Լիտվայի Հանրապետության ՆԳ նախարար Ագնե Բիլոթաիտեն բարձր է գնահատել երկկողմ արդյունավետ համագործակցությունը՝ կարևորելով 2023թ. մայիսին մեկնարկած Եվրոպական Միության Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում Լիտվայի և Լատվիայի Հանրապետությունների կողմից իրականացվող՝ «Աջակցություն Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին և անվտանգության ոլորտի բարեփոխումներին» ծրագիրը:

Ծրագրի հիմնական նպատակն է՝ աջակցել ՀՀ ներքին գործերի նախարարության կազմավորմանը և ենթակա երեք մարմիններում ընթացող լայնածավալ բարեփոխումներին:

ՀՀ ՆԳ նախարար Վահե Ղազարյանը շնորհակալություն է հայտնել հրավերի և ջերմ ընդունելության համար՝ բարձր գնահատելով միջազգային գործընկերների ջանքերը՝ ի դեմս Եվրոպական միության և, մասնավորապես, Լիտվայի Հանրապետության:

Նույն օրը պատվիրակությունը հանդիպում է ունեցել Լիտվայի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության դեպարտամենտի գլխավոր կոմիսար, գեներալ Ռենատաս Պոժելայի հետ:

Հանդիպման նպատակն էր՝ ամրապնդել և զարգացնել Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության և Լիտվայի ոստիկանության համագործակցությունը մի շարք ուղղություններով:

Վահե Ղազարյանը լիտվացի գործընկերներին ներկայացրել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության բարեփոխումների ընթացքը և արձանագրված արդյունքները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են օպերատիվ-ծառայողական գործունեության ոլորտում ՀՀ ՆԳ նախարարության ոստիկանության և Լիտվայի ոստիկանության միջև համագործակցության հարցերի լայն շրջանակ: Անդրադարձ է կատարվել կիբերհանցավորության աճի միտումներին, հանցավորության այդ տեսակի տարբեր դրսևորումներին և դրանց դեմ պայքարի նոր ձևերին ու մեթոդներին: Կողմերը մտահոգություն են հայտնել նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության կտրուկ աճի վերաբերյալ:

Վահե Ղազարյանը նշել է, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը մեծ աշխատանք է կատարում թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի ոլորտում, իսկ 2023 թվականը հայտարարված է թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի տարի:

Հանդիպման արդյունքներով կողմերի միջև ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության և Լիտվայի Հանրապետության ներքին գործերի նախարարությանն առընթեր ոստիկանության դեպարտամենտի միջև երկկողմ համագործակցության ամրապնդման մասին» 2023-2024 թվականների գործողությունների ծրագիրը, որի շրջանակներում մի շարք միջոցառումներ կիրականացվեն՝ ուղղված երկու երկրների ոստիկանական կառույցների միջև փոխգործակցության զարգացմանը և կարողությունների ուժեղացմանը:

Հունիսի 13-ին Վահե Ղազարյանի գլխավորած պատվիրակությունը Լիտվա կատարած այցի շրջանակներում ծանոթացել է Լիտվայի Հանրապետության Ներքին գործերի նախարարության Հասարակական անվտանգության ծառայության գործառույթներին, տեխնիկական հագեցվածությանն ու հատուկ տրանսպորտային միջոցներին: Լիտվայի Հանրապետության Ներքին ծառայության ստորաբաժանումները 2007 թվականին վերակազմավորվել են Ներքին գործերի նախարարությանը կից Հասարակական անվտանգության ծառայության, որի հիմնական գործառույթներն են հասարակական կարգի պահպանությունը, ձերբակալվածների և դատապարտյալների ուղեկցումը, ռազմավարական պետական օբյեկտների պահպանությունը:

Պատվիրակությունն այցելել է նաև Կաունասի ոստիկանության տարածքային բաժին, որտեղ ծանոթացել է բաժնի աշխատանքներին, խնդիրներին և տեխնիկական հագեցվածությանը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Այցի ընթացքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության և Լիտվայի Հանրապետության ներքին գործերի նախարարությանն առընթեր ոստիկանության դեպարտամենտի միջև երկկողմ համագործակցության ամրապնդման մասին» 2023-2024 թվականների գործողությունների ծրագիրը:

Կողմերը պատրաստակամություն են հայտնել շարունակելու և ամրապնդելու երկկողմ արդյունավետ համագործակցությունը:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

19.06.2023թ.